

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՐԿՐՈՒՄ ՀԱՍՅՎԵԼ Ե ԴԱՏՄԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ»

Հունիսի 5-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացված կառավարության նիստում վարչապետը հանրագումարեց անցած տարվա ընթացքում գործադիր իշխանության կողմից իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունքները:



Ըստ վարչապետի, 2012 թվականի համեմատ, գրեթե կես միլիոն մարդ դուրս է եկել աղքատությունից: 2012 թվականին, երբ մենք եկանք իշխանություն, 1 միլիոն 100 հազար մարդ գտնվում էր աղքատության շեմից ցածր մակարդակի վրա, իսկ այսօր այս ցուցանիշը կրկնակի կրճատվել է, - նշեց Իրակլի Դարիբաշվիլին և հավելեց, որ աղքատության մակարդակը, նախորդ ցուցանիշների համեմատ, նվազել է 1,9 տոկոսով և հասել 15,6 տոկոսի, ինչը դեռ մեծ խնդիր է, բայց պատմական նվազագույնն է:

- Եթե հիշում եք, ըստ վիճակագրության, աղքատության մակարդակը 2010, 2011, 2012 թվականներին տատանվում էր 37-38 տոկոսի շրջանակներում, իսկ այսօր այն կազմում է 15,6 տոկոս: Աղքատությունը գտնվում է պատմական նվազագույնի վրա՝ 15,6 տոկոս, ինչը, իհարկե, դեռ մեծ խնդիր է, բայց դա պատմական նվազագույնն է: 2012-ի համեմատ գրեթե կես միլիոն մարդ դուրս է եկել աղքատությունից, 2012-ի համեմատ, այս ցուցանիշը կրկնակի կրճատվել է, - հայտարարեց վարչապետը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԸՆԹԱՑՆ ԱԿՆՐԱՅՏ Ե, ԴՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄԸ՝ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 30-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին կառավարության 2022 թվականի գործունեության հաշվետվությանը հանդես է գալու երկրի խորհրդարանում: Իսկ մինչ այդ, Վրաստանի կառավարությունը խորհրդարանին ներկայացրեց երկրի վարչապետի ամենամյա զեկույցի տեքստը, որտեղ մանրամասն ներկայացված է գործադիր իշխանության 2022 թվականի հունիսից մինչև 2023 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում կատարած գործունեությունը:

ՀԱՍՆՆԱԿԱՆ ՍՈՒՐՈՒՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԸՆԴՊՐԿՈՒՄ Ե ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 94,7 ՏՈԿՈՍԸ

Վրաստանի խորհրդարանին ներկայացված գործադիր իշխանության գործունեության հաշվետվության համաձայն, ներկա դրությամբ համընդհանուր առողջապահության ծրագրից օգտվում է բնակչության 94,7 տոկոսը, և ծրագրի գործարկումից մինչև օրս շուրջ 3 միլիոն քաղաքացի ստացել է 11 միլիոն բժշկական օգնություն՝ 7 միլիարդ լարի ընդհանուր գումարով:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԿՑՈՒԹՅՈՒՆ

764 ՄԻԼԻՈՆ ԴՈՒԼԱՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ

Վերջին մեկ տարում Վրաստանի կառավարությունը 19 վարկային/դրամաշնորհային համաձայնագիր է ստորագրել միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ՝ ընդհանուր առմամբ ստանալով 764 մլն դոլար:



Վրաստանի կառավարության տարածած տեղեկատվության համաձայն, 2022 թվականի հունիսից մինչև 2023 թվականի մայիս ընկած ժամանակահատվածը գործադիր ֆինանսների հետ կապված համաձայնագրեր է ստորագրել Գերմանական զարգացման բանկի (KfW), Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD), Ասիական զարգացման բանկի (ADB),

հստակեցվում է, որ ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը հատկացվող ֆինանսական միջոցները ուղղվել են կոմունալ ենթակառուցվածքների, ոռոգման, քաղաքների վերականգնման, էներգաարդյունավետության, տրանսպորտի, կրթության, էներգետիկայի և առողջապահական համակարգերի ամրապնդմանը:

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ «ՆՈՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հունիսի 6-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Քութայիսիում ծանոթացել է «Նորացված տարածաշրջաններ» ծրագրի շրջանակներում ընթացող աշխատանքներին:

Վարչապետն այցելել է Քութայիսիի օլիմպիական լողավազան: Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության Մուրիցի պալատում զարգացման հիմնադրամի միջոցներով կառուցվող ժամանակակից, օլիմպիական չափորոշիչներով լողավազանի երկարությունը 50 մետր է, իսկ լայնությունը՝ 25 մետր: Լողավազանային համալիրն ունի մինչև 600 հանդիսատեսի համար նախատեսված տրիբունա, փոքրիկ մակերեսով լողավազան, մարզասրահներ, մարզիկների և մրցավարների համդերձարաններ, սննդի և սպորտային սարքավորումների խանութների համար նախատեսված տարածքներ:



Ենթակառուցվածքի նախագծերի շնորհանդեսին Վրաստանի վարչապետն առանձնակի կանգ առավ «Նորացված տարածաշրջաններ» պետական ծրագրով երկրի տարբեր երկրամասերում իրականացվող և իրականացվելիք լայնածավալ նախագծերին՝ նշելով, որ ընդհանուր առմամբ դրանց իրականացումը եապես կբարելավի ենթակառուցվածքային համակարգը, ինչը դրական ազդեցություն կունենա Վրաստանի տնտեսական ներուժի ավելացման, բնակչության կենսապայմանների բարելավման վրա:

Վարչապետի խոսքով, կառավարությունը իր տարածաշրջանային նախաձեռնություններով նշանակալի ազդակ է հաղորդում երկրամասերում արտադրական բազայի հզորացմանը, մոր աշխատատեղերի ստեղծմանը, զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

Վարչապետը Քութայիսիում մասնակցել է նաև փախստական շուրջ 600 ընտանիքների բնակարաններ հանձնելու արարողությանը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՐԳԻ ՇԱՐՎԱՇԻՉԵՆ ՀԱՆԴԻՊԵԼ Ե ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՀԵՏ

Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գիրգի ՇարվաշիՉեն հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին վրաց-հայկական առկա սերտ բարեկամական հարաբերությունների շարունակական զարգացման վերաբերյալ հարցեր: Անդրադարձ կատարվեց Վրաստանի ու Հայաստանի միջև առկա բազմաշերտ բարեկամական հարաբերությունների զարգացման կարևորությունը և ռազմավարական բնույթին:



Մտքեր փոխանակվեցին երկու երկրների միջև քաղաքական ու տնտեսական կապերի ամրապնդմանը:

